ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԿԱ՛Ն, ԹԵ ՉԿԱՆ

ՆԵՑՈՒԿ ԼԻՆԵԼ

Հայրենակցական–բարեգործական կազմակերպության գոյությունը իմ կարծիքով, պայմանավորված է երկու գործոնով. նախ՝ երբ ժողովուրդը հայրենիքում է ծայրահեղ իրավիճակում և պետք է վճռի նրա լինել–չլինելու հարցը: Հասարակության գիտակից խավը այդ պահին պարտքի գերագույն զգացումով ի մի է գալիս, ստեղծում գործողություններ ծավալելու ունակ մի բջիջ, մարմին, որը կոչված է սատարելու կործանման եզրին կանգնած իր ժողովրդին: Այն ոչ պետական կառույց է, որն իրականում պետք է ապօրինի քաղաքականություն վարի՝ պետական կառույցների փոխարեն: Կոպիտ ասած՝ փրկություն անտերության մատնված ժողովրդին, մինչև հասարակության առողջացումը: Մյուս պարագան՝ հայրենակցական–բարեգործականը կարող է գոյություն ունենալ սոցիալապես բարվոք հասարակության մեջ՝ գերխնդիր ունենալով տարբեր խավերի բարոյական համախմբումը և հանգանակված դրամական միջոցների տնօրինումը: Հնարավոր է, որ կազմակերպության գործունեությունը սահմանափակվի միայն մշակութային ձեռնարկումներով: Չնայած վերը նշված հանգամանքներին, հայրենակցական-բարեգործական միությունները բուն էության քաղաքական տարբեր ունեն: Կյանքում չկա մի երևույթ, որը սահմանափակվեր ինքն իր մեջ, ցանկացած բանի, գործողության հիմքում առկա են որևէ գաղափար, որևէ միտք կամ ուղղվածություն: Մի՞թե գործուն փնտրտություն ստեղծելը քաղաքականություն չէ և ընդհակառակը: Իսկ քաղաքականությունը՝ քաղաքականության համար «եղի է անկանխատեսելի հետևանքներով»:

«Արցախ» հայրենակցականի գործունեության հիմքը նրա գաղափարախոսությունն է՝ «ամեն ինչ Արցախի համար, ամեն ինչ՝ ճակատի»: Մի՞թե սա քաղաքականություն չէ: Եվ եթե այս սուրբ գործին ֆինանսներ էին պետք լինում, մենք դրանք գտնում էինք: Իսկ ինչքան է պատահել, որ ոչ թե դրամի, այլ կենդանի, ոգեշնչող խոսքի, անձնական օրինակի կարիք է զգացվել: Փախստականներին պետք էր գուրգուրիչ խոսք, վիրավորներին՝ քաջալերիչ, իսկ պատերազմ մեկնողներին՝ սխրանքի և ինքնազոհաբերության մղող հրաշունչ բառեր: Իսկ երբ սկսվեց մեկը մյուսի հետևից Արցախյան պատմական փառաբերդերը թշնամուն հանձնելը, հայրենակցականը դուրս եկավ հրապարակ և քննադատեց իշխանությունների քաղաքականությունը: Երբ Արցախում համաժողովրդական հանրաքվե էր, իսկ ժողովրդի մեկ երրորդը տեղահանված, միությունը ստանձնեց այդ բախտորոշ իրադարձության կենսագործման ծանր պարտականությունը: Ստեղծեցին տասնվեց ընտրատարածք և համապատասխան տասնվեց հանձնաժողով: Հարկ եղած դեպքում մենք դիմում էինք նաև տեղական իշխանություններին ու մասնագետներին, և այդ կարևոր գործը հաջողությամբ իրականացվեց:

Նախագահական ընտրարշավի օրերին, ելնելով ստեղծված կացությունից, «Արցախ» միությունը ևս իր թեկնածուն առաջադրեց, և երբ կենտրոնական հանձնաժողովը նրան չգրանցեց, մենք դիմեցինք Գերագույն դատարան, որից հետո գրանցումը կատարվեց:

Ի՞նչ է այս բոլորը, եթե ոչ քաղաքականություն:

Անհրաժեշտության դեպքում մենք հանդես ենք գալիս նաև քաղաքական հայտարարություններով, տեղեկատվական շրջափակումների ժամանակ հրավիրում ենք մամուլի ասուլիսներ, կազմակերպում հանդիպումներ հայրենի գործիչների հետ:

Արցախյան պատերազմը հանգեցրեց զոհվածների, վիրավորների ու հաշմանդամների դժվար լուծելի հիմնախնդրին: Հայրենակցականը [illegible] բայ[illegible] առաջ շուրջը հավաքեց նվիրյալների մի ողջ բանակ, որը հիվանդանոցներում կազմակերպեց վիրավորների խնամքը: Սկսած գործը հետագայում պետական կայուն ծրագիր դարձավ:

«Արցախը» իր անելիքներից մեկն էլ համարում է Ղարաբաղ վերադարձողներին սատարելը, մեր գանձարկղը բաց է այդ հայորդիների համար: Առանձին մի խնդիր էլ պատանդների փրկությունն է, ինչպես նաև քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը:

«Արցախ» հայրենակցականը արմատներով կապված է հարազատ երկրամասին, ձգտում է լինել նրա ցավերի նրբազգույն արտահայտիչը և մինչև այս կամ այն հարցի պետական լուծումը, նյութական ու բարոյական նեցուկի դեր կատարել: Մի խոսքով, հայրենակցական–բարեգործական միությունները անհրաժեշտ կառույցներ են, որոնք նպաստում են հասարակության առողջացմանը:

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«Արցախ» հայրենակցական -բարեգործական միության նախագահ